ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2012, 65, № 3, 86-88

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ
(ծննդյան 100-ամյակին)
(1912-1993)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ա.Հ. Գաբրիելյանը ծնվել է 1912թ. հունիսի 14-ին, Կարսի նահանգի Նախիջևան գյուղում: 1918թ. ընտանիքը գաղթել և բնակություն է հաստատել Հայաստանի Թալինի շրջանի Արեզ (այժմ՝ Թաթուլ) գյուղում: 1938թ. ավարտել է ԵՊՀ երկրաբանաաշխարհագրական ֆակուլտետը և ընդունվել Մոսկվայի Երկրաբանահետախուզական ինստիտուտի ասպիրանտուրան: 1943թ. Ա.Գաբրիելյանը պաշտպանել է թեկնածուական և 1953թ.՝ դոկտորական ատենախոսությունները: 1954թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1956թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982թ.-ին՝ ՀՀ ԳԱԱ ակադմիկոս: Ա.Գաբրիելյանը վախճանվել է 1993թ. մայիսի 5-ին:

1941-1983թթ. Ա.Գաբրիելյանն աշխատել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում որպես դոցենտ, այնուհետև՝ պրոֆեսոր և ամբիոնի վարիչ: Մինչև 1940-ական թվականների կեսերը միաժամանակ աշխատել է Հայաստանի ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում, որպես ավագ գիտաշխատող և ապա՝ ռեգիոնալ երկրաբանության բաժնի վարիչ: 1959-1966թթ. և 1990-1993թթ. Ա.Գաբրիելյանն եղել է ՀՀ ԳԱԱ “Գիտություններ երկրի մասին” տեղեկագրի պատասխանատու խմբագիրը, իսկ 1983-1993թթ.՝ ՀՀ ԳԱԱ Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը:

1940թ.-ից սկսած մինչև իր կյանքի վերջին տարիները Ա.Գաբրիելյանը զբաղվել է Հայաստանի երկրաբանական կառուցվածքում առաջատար տեղ գրավող պալեոգենի ու նեոգենի նստվածքների շերտագրության բազմակողմանի ու մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Իր բազմամյա հետազոտությունների ընթացքում նա հավաքեց ու մշակեց հսկայական ծավալի փաստացի նյութ, որոշեց իր իսկ կողմից հավաքած հարուստ բրածո ֆաունայի տեսականին: Արդյունքում նրան հաջողվեց մշակել Հայաստանի պալեոգենի ու նեոգենի մանրակրկիտ և հիմնավորված շերտագրական սխեմաներ, առանձնացրեց հարկերը, կենսազոնաները և շերտախմբերը: Դրանք հետագայում և առ այսօր ընկած են շերտագրական աշ-

խատանքների հիմքում և կարևոր դեր խաղացին ՀՀ տարածքի քարտեզագրական, որոնողահետախուզական աշխատանքների իրականացման, երկրաբանական, տեկտոնական և մի շարք այլ մասնագիտացված քարտեզների կազմման գործում:

Ա.Գաբրիելյանը համարվում էր Ալպ-Հիմալայան գոտու Կովկաս-Անատոլիական հատվածի պալեոգենի ու նեոգենի, հատկապես նումուլիթային ֆաունայի, ինչպես նաև ռեգիոնալ երկրաբանության բնագավառներում ԽՍՀՄ-ում հայտնի մասնագետներից մեկը: Նրա բազմամյա ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվեցին ,Հայկական ԽՍՀ պալեոգենը և նեոգենը հիմնարար մենագրության մեջ (1964), որը շերտագրության ասպարեզի աշխատությունների մի դասական օրինակ է: Մենագրությունում հանգամանորեն լուսաբանված են նաև շերտագրության մի շարք ընդհանուր հարցեր, մասնավորապես՝ պալեոգենի ստորին սահմանի, միջին ու վերին էոցենի, օլիգոցենի ու միոցենի սահմանների հարցերը:

ՀՀ տարածքի հնաերկրաբանական և հնաշխարհագրական ուսումնասիրությունների սկիզբը, նույնպես կապված է Ա.Գաբրիելյանի՝ աշխատանքների հետ: Նշանակալից են նրա աշխատանքները՝ նվիրված Հարավային Կովկասի ու հարակից շրջանների տեկտոնիկայի և սեյսմատեկտոնիկայի հարցերին: 1959թ. լույս տեսավ Ա.Գաբրիելյանի ,Հայկական ԽՍՀ տեկտոնիկայի հիմնական հարցերը մենագրությունը: Մենագրությունում նորովի են լուսաբանվում տարածքի տեկտոնական կառուցվածքի բազմաթիվ հիմնարար հարցեր: Տեկտոնական շրջանացմանը և գլխավոր տեկտոնական կառույցների բնութագրմանը զուգընթաց, համոզիչ կերպով ցույց է տրված տարածաշրջանի կառուցվածքում խորքային բեկվածքների կարևորագույն դերը, Կովկասում լայնական բարձրացումների ու իջեցումների զոնաների առկայությունը, Մերձարաքսյան գոտու զարգացման ենթապլատֆորմային բնույթը: Հիշատակման է արժանի Ա.Գաբրիելյանի մեծ ավանդը՝ “Հայկական ԽՍՀ երկրաբանություն”, (Շերտագրություն) հատորի կազմման և խմբագրման աշխատանքներում:

1968թ. Ա.Գաբրիելյանի ղեկավարությամբ հրատարակվեց Հայաստանի 1:500000 մասշտաբի տեկտոնական քարտեզը: Քարտեզում, որը կազմված է ըստ ,ծալքավորության հասակիե սկզբունքի, իրենց ընդհանրացումը և հետագա զարգացումը ստացան Ա.Գաբրիելյանի գաղափարներն ու պատկերացումները հանրապետության բարդ տեկտոնական կառուցվածքի վերաբերյալ: Այն իր ժամանակի ամենաբարձր մակարդակով կազմված տեկտոնական քարտեզներից մեկն էր և լայն ճանաչում գտավ արտասահմանյան երկրաբանների մոտ: 1981թ. լույս տեսավ ,Հայկական ԽՍՀ սեյսմատեկտոնիկանե ստվարածավալ մենագրությունը (համահեղինակներ Հ.Սարգսյան, Գ.Սիմոնյան), որն ամփոփում է մինչև այդ ՀՀ տարածքում կատարված տեկտոնական, սեյսմատեկտոնական ուսումնասիրությունների արդյունքները:

Ա.Գաբրիելյանը զբաղվել է նաև Կովկաս-Անատոլիա-Իրանա-

կան ռեգիոնի տեկտոնական շրջանացման հարցերով: 1970թ. նրա կողմից առաջարկվեց այդ ռեգիոնի տեկտոնական շրջանցման նոր սխեմա, որում հետագայում առանձնացվեցին նաև երկրաշարժային գոտիները:

Հարկ է նշել, որ Ա.Գաբրիելյանը, իր շուրջը համախմբելով երկրաբանական տարբեր կազմակերպություններում գործող մի խումբ փորձառու մասնագետների, ստեղծեց Հայաստանի ռեգիոնալ երկրաբանության իր ,դպրոցը, որի դերը հանրապետության ռեգիոնալ երկրաբանության ուսումնասիրման գործում ակնհայտ է:

Ակադեմիկոս Ա.Գաբրիելյանի գիտական ժառանգությունը ընդգրկում է մոտ 150 հրատարակված աշխատություններ, այդ թվում՝ 12 մենագրություն: Նա միջազգային տեկտոնական և միութենական շերտագրական գիտահամակարգող խորհուրդների անդամ էր: Գործուն մասնակցություն է ունեցել մի շարք միջազգային ծրագրերի ու նախագծերի մշակմանը՝ հաճախ ղեկավարելով դրանց կովկասյան բաժինը: Դրանք են. ԽՍՀՄ տեկտոնական քարտեզը, ԽՍՀՄ հարավի նավթային շրջանների տեկտոնական քարտեզը, Կովկասի տեկտոնական քարտեզը, ԽՍՀՄ ֆացիալ-հնաշխարհագրական ատլասը, Ալպ-Հիմալայան մարզի էոցենի ու օլիգոցենի սահմանի միջազգային թիվ 141 նախագիծը, ԽՍՀՄ շերտագրական բառարանը: Նա զեկուցումներով բազմիցս հանդես է եկել շերտագրական, հնէաբանական և տեկտոնական հարցերին նվիրված միջազգային գիտաժողովներում՝ Ֆրանսիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Հնդկաստանում և այլուր:

Ա.Գաբրիելյանը մեծ ավանդ ունի ազգային երկրաբանական կադրերի պատրաստման գործում: Նա փայլուն և բարձր կարգի դասախոս էր, որի խորը մասնագիտական գիտելիքները զուգակցվում էին բնածին մանկավարժական տաղանդի հետ: Նրա նախաձեռնությամբ երկրաբանական ֆակուլտետում 1949թ. ստեղծվեց պատմական և ռեգիոնալ երկրաբանության ամբիոնը, որը նա ղեկավարեց մոտ 30 տարի: Արժանին մատուցելով անվանի գիտնականին, վաստակաշատ մանկավարժին և երկրաբանական ֆակուլտետի հիմնադիր դասախոսներից մեկին, ԵՊՀ գիտական խորհուրդը “Հայաստանի երկրաբանության” կաբինետը անվանակոչեց ակադեմիկոս Ա.Գաբրիելյանի անունով:

Արշալույս Գաբրիելյանի՝ վաստակաշատ գիտնականի, երկրաբան-մանկավարժի, արտակարգ համեստ ու բարեկիրթ անձնավորության հիշատակը միշտ վառ կմնա նրա բազում աշակերտների և նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ
ՀՀ ԳԱԱ “Գիտություններ երկրի մասին” տեղեկագրի խմբագրություն